

ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 1061-Ն

25.03.2022թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2019 Թ.-Ի ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 2148/1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով WISDOM ամսագրի գլխավոր խմբագրի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Համալսարանի Ռեկտորի 2019 թ.-ի հունիսի 12-ի «WISDOM ամսագրի հոդվածագիրների համար հրատարակության վարձավճար սահմանելու մասին» թիվ 2148/1-Լ հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. WISDOM ամսագրին ներկայացված հոդվածների հրատարակությունը կազմակերպելու նպատակով հոդվածագիրների համար սահմանել հրատարակության վճար՝

- ՀՀ ռեզիդենտների համար՝ 400 000 ՀՀ դրամ,
- ՀՀ ոչ ռեզիդենտների համար՝ 800 ԱՄՆ դոլար»:

2. Սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունների կատարումը վերապահել համալսարանի գլխավոր հաշվապահ Ս.Հարությունյանին:



ՍՐԲՈՒՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ